

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Քիֆիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Է Լ Է Ք Ե Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաջանչիւր բառին 2 կոպեկ:

Տ Է Լ Է Ք Ե Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

ՄՇԱԿ

(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԱՍ 1897 ԹՎԱԿԱՆԻ

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ը

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի
Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտատպագրից՝ ТИФЛИС, Rédaction «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գանիական նպատակը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. խոսքը բարեգործութիւնն է. Հայաստանի բարեգործական ընկերութեան ժողովը. Քիֆիսի առեւտրական բանկի ընդհանուր ժողովը: Վերջին խօսքը Վ. Աղայեանիցն է. Նախագիտութեան ընդհանուր ժողովը. Նախագիտութեան խմբագրութեան. Ներքին խօսքը. ԱՐՄԵՐՈՐԴ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին առեւտրական խօսքը. Պատերազմի դաշտից. Նամակ Քիֆիսից. — ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ — ԲՈՐՈՍԱՆ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԼԱՍԻԱՆԱՆ. Որժիւր բառերը չէ:

ԳԱՆԻԱԿԱՆ ՆԱԽԱՍԱՐ

Գանիայի թագուհու հովանաւորութեան տակ կազմված յանձնաժողովը, որի մասին արդէն մենք առիթ ունեցանք մի քանի անգամ հաղորդելու, այս օրերս ուղարկեց կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան էլի 10 հազար ռուբլի, և ուրիշն նախկին 6,000 ռուբլու հետ միասին նա հասցրել է թիւրքաց Հայաստանից փախած զաղթականների օգտին 16 հազար ռուբլի գումար:

Թոյլ ենք տալիս մեզ թարգման հանդիսանալ հայոց հասարակութեան զգացմունքներին շնորհակալութիւն յայտնելով զանիական ազգին և նորին մեծութիւն թագուհուն, որը համարեալ առաջինը և զառ մարդը Ներսիսի մէջ, որ իր բարձր հովանաւորութեան տակ առաւ մի այլընտրանք գումար մարդասիրական դրոժ, համակ-

րութիւն յայտնելով թիւրքաց բարբարոսութիւնից զբաղաւայած նահատակ ազգին... Խնդիրը դուռնի բանակութեան մէջ չէ, այլ այն համակրութեան մէջ, որ արտայայտում է Գանիան, նայն իսկ իր թագուհու անմիջական մասնակցութեամբ, կազմակերպելով օգնութեան մի այնպիսի դրոժ, որը հեռու քաղաքական աղմուկներից միայն մի նպատակ ունի՝ հայ տալ հայրենիքից փախած զաղթականների ահապին բազմութեան:

Թիւրքաց նահատակ ժողովրդի ապագայ սերունդը թերթերով իր զբաղող ազգի պատմութիւնը, անսիրտ և անհոգի քաղաքականութեան տխուր ու անէջերի մէջ կը մխիթարվի գէթ այդ բացարձակ մարդասիրութեան սակաւթիւ փառասերով, քանի որ արի և կրակի ենթարկված ժողովրդի մնացորդները սովից կը մեռնէին, եթէ չը լինէին այդ մարդասէր ձեռքերը...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՇՈՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ապրիլի 26-ին վախճանվեց Քիֆիսիցի 2-րդ կարգի վաճառական Յովհաննէս Գալիեան խուզազեան, որը իր ամբողջ կարողութիւնը—մօտ 150,000 ռուբլի կտակել է կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան: Այդ կտակը հասարական կերպով զրկած և հաստատված է 1896

16,000, Գրաւորաի կուում—12,000, Սեզանի կուում—50,000, Պարիզի մօտ գտնական ժամանակ—20,000: Ահա թէ ինչպէս են ազգերը ջնջւում միմեանց:

Սակայն պատերազմը թէև այսքան ահուկելի, բայց, զբաղաւայած, անսուսական չարիք է: Գարեբի սկզբից ազգերը կուում են, իսկ գիտնականները խօսում են պատերազմի դէմ: Մասնաւոր այժմ, երբ մարդու խնամքը տարածվում է նայն իսկ անբան անասունների վրա, շատ են վիճում պատերազմի դէմ: Ահուկել կուտորածն ունի իր պաշտպանները, թէև օրէցօր վատտակում է անիծողների ստուար բազմութիւն: Խղճալիսանները երազում են միջազգային միջնորդ դատարան, որ կը նստի պատերազմի ատուած տեղ, բայց իրականութիւնը ցայց է տալիս, որ երբեք քաղաքակիրթ մարդ չեն կարող նստել միասին և կատարեալ համեմատութեամբ դատաստան անել: Եւրոպա—Որովհետև դատաւորը արդար կարող է լինել այն դէպքում, երբ նա չան չունի իր քննութեան տուած գործի մէջ: Իսկ մեր ժամանակ միջազգային վիճեում այդպիսի դատաւոր գտնելը անհնարին է:

Եւ այսպէս, միջազգային դործերը դրստելու համար մնում է այն միջոցը, որ մարդուն յայտնի էր դեռ այն ժամանակ, երբ շատ հեռու չէր գնացել զազանի դրոժիւնից: Այդ միջոցը պատերազմն է: Նա անխուսափելի է գտնում շատ յաճախ, բայց նայնպէս արդար դատաւոր չէ, որովհետև նուիրաբարձում է այն սկզբունքը, թէ

Թւի հոկտեմբերի 6-ին և պարունակում է հետեւեալը: 1) Կտակողը, Յովհաննէս խուզազեան, իր ամբողջ գոյքը, որ բաղկացած է անշարժ կալուածներից, Քիֆիսի առեւտրական բանկի ակցիաներից, խաղարկութեան և տոկոսաւոր տոմսակներից, Քիֆիսի փոխադարձ վարկի ընկերութեան տոմսակներից և առհասարակ դրամազրկից՝ խոշնում է կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան անխախտութիւն, պարտաւորացնելով ընկերութեան՝ բանալ ապաստարաններ, զարդեր, աղքատանոցներ, ձրի հիւանդանոցներ և այլ այլպիսի բարեգործական հաստատութիւններ, ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը բարեհայեցողութեամբ: 2) Ընկերութիւնը պէտք է նրա մահից յետոյ հետեւեալ պարտաւորութիւնները կատարէ. ա) տալ կտակողի կնոջ—Մարիամ խուզազեանին միանուագ 7000 ռուբլի, բացի զրանից այդ կնոջն է պատկանում տան բոլոր կահկարասիները, արծաթեղէնը, քարեղէնը և իրաւունք է տրվում օգտվելու մի տան և մի այգու եկամուտից 7 տարի: Այն տունը, որ գտնվում է Քիֆիսի Արքայապալատի հրապարակի վրա, 7 տարուց կամ կնոջ մարդու գնալուց յետոյ անցնում է նայնպէս Բարեգործական ընկերութեան, իսկ այգին, որ գտնվում է Գոբու գետում, անցնում է իր եղբորորդիներին: բ) տալ մօրը՝ Նատալիա խուզազեանին ապրուստի համար, ամսական 25 ռ. գ) տալ իր եղբոր փարսաւան խուզազեանին միանուագ 3000 ռ. դ) տալ իր եղբորորդի աշակերտ Գալիկ խուզազեանին ամսական 25 ռ., իսկ գինեղանայում ուսումը աւարտելուց յետոյ, երբ համալսարան կը մտնի, տալ ամսական 40 ռուբլի մինչև ուսումն աւարտելը. ե) տալ իր աղջակահայտնի Սիւրանու Մանգեանին միանուագ 500 ռուբլի. զ) տալ իր քրոյ Աննա Միլոտովանին միանուագ 2000 ռ. է) տալ կոյրերի ինքնամասը ընկերութեան միանուագ 1,500 ռ. ը) տալ իր անսիկ Թամարա Կահանանին միանուագ—500 ռ. թ) տալ Ներսիսեան զարդեր 1,500 ռ.: Կտակող իր թաղման և մահաբձանի համար 3000 ռ.:

Եթէ որ և է պատճառով Բարեգործական ընկերութիւնը փակվի, բոլոր կտակած գոյքը և գումարները պէտք է անցնեն Ներսիսեան զարդերին: Նա, ով ուժեղ է: Հէնց այս է պատճառը, որ երբ ծագում է մի որ և է պատերազմ, աղքերի համակրութիւնը կամ հայկերութիւնը գէպի կուող կողմերը չէ կապվում այն հանգամանքի հետ, թէ ով է յաղթում: Կարեւոր է ոչ թէ յաղթութիւնը, այլ այն դիրքը, որ բռնել են երկու կողմերը այն պայքարի մէջ, որ առաջ է բերել պատերազմ: Ուստի աղքերի համակրութիւնը նրանց կողմն է, որոնք ներկայացնում են իրաւունքի, արդարութեան պաշտպանութիւնը: Այդ կողմերը կարող են լինել թույլ, յաղթվող, կարող են լինել և ուժեղ, յաղթող: Օրինակները բազմաթիւ են:

1821 թվականից սկսվեց Յունաստանի ապստամբութիւնը Ռուսիայի դէմ: Թէև Ռուսիան յաղթում էր, ջարդում էր յոյներին, բայց աղքերի ամբողջ համակրութիւնը յոյների կողմն էր, որովհետև կոխը յոյների ազատութեան համար էր: 1859 թվին փոքրիկ ու թույլ խաղիւս կըւում էր Բալկանի Աւստրիայի դէմ: Խաղաղիւսի իրաւաբանչիւր, նոյն իսկ անշան աջողութիւն ուրախացում էր, իսկ աւստրիական աջողութիւնները խորթութիւն էին պատճառում: 1860-ական թվականներին Միացեալ Նահանգների հիսիսային մասը կատաղի կուի էր մղում հալաւային մասի դէմ, երկար ժամանակ յաղթող վերջինս էր, բայց ամենքը համակրում էին հիսիսային նահանգներին, որոնք կուում էին նեղրների աղատութեան համար: 1885-ին Սերբիան պատերազմ հրատարակեց Բոսնիայի դէմ, յաղ-

րանոցին վերոյիեալ բոլոր պարտաւորութիւններով: Կտակաւորները նշանակվում են Բարեգործական ընկերութեան խորհրդի նախագահը, փոխնախագահը (ներկայ դէպքում պ. Վ. Անանեան և Վ. Մէլիք-Աղաբեան) և Քիֆիսի վաճառական Յովհաննէս Կահանանը: Ապրիլի 27-ին, Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, լսելով խուզազեանի կտակի մասին, յարգեց նրա յիշատակը ոտի կանգնելով:

ՀԱՅՈՒՆԱՅ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

Ապրիլի 27-ին, ցերեկվայ 11 ժամին, կար ու ձեռի զարդում նշանակված էր ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը: Կանոնադրութեան համաձայն, ժողովին նախագահում է Քիֆիսի առաջնորդը, իսկ ժողովը կայացած է համարվում, երբ ներկայ է Քիֆիսի անդամների մի քանորդ մասը, ներկայ դէպքում 50 հոգի: Հաշիւ ժամը 1-ին ժողովը կարողացաւ բացվել քահանայ Զարդեանի նախագահութեամբ, որին Քիֆիսի առաջնորդ յանձնել էր նախագահելու իր փոխարէն: Վարչութեան ատենադպիր տիկին Ս. Բաբայան կարողաց ընկերութեան 1896 թվի հաշիւը, որից երևաց, որ ընկերութիւնը ունէր 1896 թվի ընթացքում 60 մըշտական և 178 իսկական անդամ: Առ 1-ն յունվարի 1896 թ. ընկերութիւնը ունէր մնացորդ զրամ—15498 ռ. 78 կ: Տարվայ ընթացքում ունեցել է եկամուտ՝ 5979 ռ. 23 կ: Կտակող եղել է ո. Նշան եկեղեցու և կար ու ձեռի զարդների, տառապեալների, ուսման վճարի համար—5738 ռ. 66 կ: Ինչպէս երևում է, ընկերութեան գլխաւոր գործունէութիւնը կենտրոնացած է եղել ո. Նշան եկեղեցու և կար ու ձեռի զարդների վրա, որոնք և կանգնել են ընկերութեան եկամուտի մեծագոյն մասը—5022 ռ. 78 կ. և միայն փոքր մասը—715 ռ. 88 կ. դործադրվել է տառապեալներին և կարօտեալներին օգնելու: Բացի զրանից ընկերութիւնը պահել է և խոհարարական դասընթացը, որից զուտ արդիւնք, բոլոր ծախսերը զուրա գալուց յետոյ, մնացել է 37 ռ. 47 կ:

Թեցին բոլորները և ամենքը գոհ էին այդ յաղթութիւնից, որովհետև իրաւունքը բոլորների կողմն էր: 1877—1878 թվին Ռուսաստանը յարձակվեց թիւրքիայի վրա, այս անգամ մի հզօր պետութիւն գնում էր մի թույլ պետութեան դէմ, բայց համակրութիւնը Ռուսաստանի կողմն էր, որովհետև նրա նպատակն էր աղատել քրիստոնեաներին: Ահա և զրա հաջաւակ օրինակը: Այնեալ տարի Ռաւիլան, որ եւրոպական մեծ պետութիւններից մէկն է, քաղաքակիրթ ու ուժեղ ազգ, յարձակում գործեց Հաբէշտանի դէմ, բայց փառաւոր ջարդ կեղաւ վայրենի, տղէտ ու խղճ հաբէշներից և ստիպված եղաւ ամօթալի հաշտութեան դաշնագիր կապել: Ամենքի առաջ դատաւարտելին Ռաւիլան էր, իսկ նրա պարտութիւնը կըւել բաւականութիւն օղատաւեց ամեն տեղ: Պատճառը այն էր, որ Ռաւիլան անիրաւ էր, ուղում էր հուանել մի երկիր, որի բնակիչները չէին ցանկանում օտարի լուծի տակ մտնել և պաշտպանում էին իրանց հայրենիքը: Եւ բոլոր մեր յիշած դէպքերում այն աղքերը, որոնք կուում էին իրանց սքաւղան իրաւունքների անուսով, յաղթվում էին կամ յաղթում, պարծնում են թէ իրանց պարտութիւններով և թէ տարած յաղթութիւններով: Պատերազմը արդար դատաւոր չէ, նա ոյժը իրաւունք է դարձնում: Արդար դատաւորը պատերազմի չարժանութիւնն է:

Ոյժը իրաւունք չէ:

ՆԱՄԱԿ ԵՎԱՍՏԵՐԻՆՈՒՄԻՑ

Ապրիլի 15-ին

«Մշակի» № 7-ի մէջ տպագրված են «Նամակում լինել էինք մի խումբ տիկիներին և օրիորդներին անուններ, որոնք հոգ էին տանում այնտեղ տպատանում հայ գաղթականների մասին: Այսօր տեսնելով վերադարձած խմբի երանգուն գործունէութիւնը և մարդասիրական ըզգացմունքը դէպ իրանց տառապեալ եղբայրները և քոյրերը, ցանկանում են ընթերցողներին ուրախակից անել մեր ուրախութեան: Խումբը կազմակերպեց յետոյ, խմբի անդամները սկսեցին շրջել քաղաքի զանազան մասեր՝ մօտիկ ծանօթանալու և գաղթականներին քանակութիւնն իմանալու համար: Գաղթականներից շատերն ապրում էին մօթ և խոնաւ բնակարաններում: Այգիսիներին իսկոյն տեղափոխեցին այլ բնակարան: Մեր եկեղեցու երեցիները բացեց եկեղեցեպետական անկերի դռները գաղթականներին առաջ: Այժմ 8 ընտանիք ապրում են եկեղեցեպետական տներում, իսկ մնացածները քաղաքի զանազան մասերում: Իւրաքանչիւր ընտանիքին ամսական տրվում է մի որոշ գումար, ինչպէս տան վարձ և այլ կարիքների համար, նախելով ընտանիքի թիւին: Այսպէս հոգացվում է և հանդերձների մասին: Ահա մօտենում էր Չատիկը, ամեն օր պատրաստութիւն էր տեսնում, աշխատում էր ունենալ նոր և մաքուր հագուստ և չքեղ սեղան, որպէս զի ուրախ անցկացնի այդ նշանաւոր տօնը: Բայց ինչ էր անում հայ գաղթականը... արդեօք նա էլ մտածում էր այդ բաների մասին, թէ նա համեմատում էր իր անցեալը ներկայի հետ... Պատասխանը անմիջապէս է: Ո՛վ պիտի հանդէ նրան այդ անմիջապէս դրոշմանից, մի րօպէ գտնէ մոռացնել տար նրա անցեալը: Այդ տնողը պէտք է լինէր ապահով ապրող նրա եղբայրը և քոյրը: Այգիսն էլ եղաւ. նախապէս խորհրդակցեցեալ յետոյ՝ խմբի անդամներից իւրաքանչիւրը իր տնից բերել էր եկեղեցու բազը եփած գառներ, մի քանի հարկուր ձուեր, ձկնեղէն, պտորատախ փլաւ, չաքարահացեր, ֆունտերով մամուր, վերջապէս այն, ինչ որ ինքն ունենալու էր: Չատիկն իր սեղանի վրայ Շաբաթ օր, կէսօրից յետոյ, երկու սայլ բարձած՝ իրանք հետը չըմում և բաժանում էին գաղթականներին: Այսպէս մեր քննելոյ սեղանը տպացուցեց, որ ինքն էլ դեռէ գործելու Պատիւ նրան:

Ա. Տէր-Խաչատրեան

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռիֆլիս, ապրիլի 19-ին

Կարգացի ցաւօր սրտի «Մշակ» լրագրի 44 համարը, որի մէջ, ի թիւս այլ լուսերի, գրված էր, թէ՛ Մոզնու եկեղեցու քահանաներից մինը, որի անունը չէ յիշված, հայ գաղթականներից մի-նի երկրպային միտրեալով՝ պահանջել և ստացել է երեք բաւլի, իսկ տերապոսն էլ՝ մի բաւլի: Եւ, որպէս նոյն եկեղեցու աւագ քահանայ, հետամուտ եղալ, բայց չը կարողացաւ իմանալ այդ քահանայի ով լինելը. ուստի խնդրում եմ կամ ինձ յայտնել և կամ «Մշակի» միջոցով յայտարարել միտրեալ քահանայի և տերապոսի անունը, որպէս զի հարկ եղած կարգադրութիւն լինի ի զգուշութիւն այլոց: Շատ կը պարտաւորեմ, եթէ գաղթականի անունն էլ յայտնեմ:

Գրեգոր աւագ քահ. Տէր-Բարսեղեանց

Պատասխանը կատարում ենք զործակալ քահանայի խնդրի՝ և յայտարարում ենք, որ գաղթականից փող առնող և երկխոս մկրտող քահանան է Մոզնու եկեղեցու միաբան տէր-Սիմօնը, իսկ գաղթական ընտանիքը, որից այդ քահանան պահանջել և ստացել է, իր տերապոսի հետ, 4 բ., ընկալվում է կօմսուրկայա փողոցում, տուն Ջաւրովի, № 22: Դրա հետ միասին պարտք ենք դնում Տէր-Բարսեղեան քահանային վրա, որ նա նոյնպէս հրապարակով յայտնի մեզ այն կարգադրութիւնը, որ պիտի անի չի զգուշութիւն այլոց: Մենք կը սպասենք:

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, ապրիլի 22-ին

Խնդրում ենք այս երկտող գրութեան տեղ հորհրդէ «Մշակի» էջերում: Երևանի թեմական

հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է իր հորհրդակալութիւնը Պօղոս և Թադէոս Գևորգեանց եղբայրներին, որոնք ի յիշատակ իրանց հանգուցեալ եղբայր Խաչատրի՝ նը-ւերեցին յօգուտ դպրոցի 200 բաւլի:

Անդամ հոգաբարձութեան՝ Գեորգ Անտօնեանց Բարաւուդար՝ Ա. Արապկունի

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՊԵՐ

Կիրակի, ապրիլի 27-ին, Թագաժառանգ Յեւարե-վիչ Մեծ Խլխան Գիօրգի ծննդեան տօնի պատ-հասով, բոլոր եկեղեցիներում մաղթանքներ կա-տարվեցին. քաղաքը զարդարված էր դրօշակնե-րով իսկ երեկոյեան լուսավառված:

Հարկաւոր ենք համարում, թիւրքմանցութիւն-ների առաջն առնելու համար, պարզել հետե-ւեալը. «Новое Обозрение» լրագրի, ապրիլի 27-ի համարում, խօսելով քաղաքային ընտրողա-կան ցուցակների մասին, յայտնում է, որ պատ-րաստվում է և «մշակականների» ընտրողական ցուցակ: Վրայ «Խլխի» լրագրի, նոյն օրվայ համարում, նոյնպէս ակնարկում է. թէ «Մշակի» կուսակցութիւնը մասնակցութիւն ունի քաղա-քային առաջիկայ ընտրութիւններին մէջ: Որ և է թիւրքմանցութեան տեղիք չը տալու համար, պարտք ենք համարում «Մշակի» էջերում հրա-պարակով յայտարարել, որ «Մշակի» կուսակցու-թիւնը, որը կաթողիկոսական և ծխական ընտրու-թիւնների մէջ մասնակցութիւն է ունեցել, ներկայ ընտրողական ընտրութիւններին մէջ, իբրեւ մի կազմակերպված կուսակցութիւն, մաս-նակցութիւն չունի: Մեր կուսակցութեան պատ-կանող մի քանի անձինք, ճշմարիտ է, մասնակ-ցում են քաղաքային ընտրութիւններին՝ թէ իր-դա ընտրողներ և թէ իբրեւ ընտրողներ, բայց դեռ կապ չունի ամբողջ կուսակցութեան հետ: Եթէ մեր կուսակցութիւնը նպատակ ունենար մասնակցելու քաղաքային ընտրութիւններին, իբրեւ մի կազմակերպված մարմին, մենք ամե-նից առաջ կը ապագրէինք մեր պրօգրամը և ցուցակը, ինչպէս այդ արեւ ենք ուրիշ գէպերում:

Անախորժ զգացմունքով կարգացնէ հետե-ւեալ ամօթալի լուրը Նիւ-Եօրկի մի լրագրի մէջ. «Traveler» թերթը կառէ, թէ հինգ հայերէ բաղկացած խումբ մը գտնուած է Ուսթընէ քիչ հեռու՝ որ կիզծ դրամ չիկնելու զբաղած էր: Կը խնդրեմք մեր Ուսթընի թղթա-կիցներէն, որ այս մասին տեղեկութիւն տան մեզի: Ճշմարիտ է լուրը: Մեր կողմից յանձ-նարարում ենք Ամերիկայի հայերին՝ ստուգել այդ անախորժ լուրը, և եթէ սխալ է, յայտա-րարել ամերիկական լրագրիներին մէջ, որ դա մի զրպարտութիւն է, հնարած հայ համայնքի թշնամիների կողմից, պահուելու հայերի վրա ստուար գցելու նպատակով:

Ապրիլի 27-ին, գումարի դահլիճում կայացաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որի անդամներ թիւը մո-ղով ընթացում հասաւ 65-ի: Ժողովը արտա-կարգ էր, և հրաւիրված էր խորհրդի կողմից՝ 16 անդամների յայտարարութեան հիման վրա, որով բողոքողները յայտնելով, որ մի պարոն (Սիմօն Հախումեան) առանց անդամ լի-նելու՝ մասնակցել է մարտի 2/16-ի ժողովին, խնդրում են ստուգել փաստը, և բեկանել այդ ժողովի որոշումները, իբրեւ անօրինի: Խորհուր-դը այդ հարցը առաջարկել է արտակարգ ընդ-հանուր ժողովին՝ իր կարծիքի հետ միասին: Ընդհանուր ժողովը սկզբում հաստատեց Բաթու-մի և Ախալցխայի հիւղերի 1897 թվի նախահա-չիւնները, և վերջումն էլ ձեռնարկեց խորհրդի մի անդամի և երկու փոխ-անդամի ընտրութեան: Առաջարկված թեկնածուներից անցաւ Գեորգ Դահումեան, ընտրվելով փոխ-անդամ: Ժողովին երկար զբաղեցնողը՝ 16 անդամների յայտարա-րութեանն էր: Խորհրդի զեկուցումից պարզ ե-րևաց, որ իրաւի Սիմօն Հախումեան, որ եկել էր մարտի 2/16-ի ժողովին, մասնակցել էր ժո-ղովի պարագմունքներին, և նոյն իսկ ընտրվել զրադարանական մասնաժողովի մէջ, ընկերու-թեան անդամ չէ եղել: Ընդունելով, որ այդ պարոնը անդամ չէ, և ուրեմն նրա մասնակցու-թիւնը անօրինի է, խորհուրդը առաջարկում էր անօրինի համարել միայն նրա ընտրութիւնը, իսկ

միւս որոշումները պահել անփոփոխ, ի նկատի ունենալով որ այդ որոշումները կայացել են ձայ-ների հիշող առաւելութեամբ, և ուրեմն մի ձայն աղեղնութիւն չէր կարող անել: Բայց խորհրդի առաջարկից, ժողովի մէջ երկու առա-ջարկութիւններ եղան. մի կողմը պնդում էր՝ բեկանել անկանոն կազմված ժողովի որոշումները, և ապա անմիջապէս ներկայ կանոնաւոր ժողովում հաստատել այդ որոշումները (բայց Ս. Հախու-մեանի ընտրութիւնը), իսկ միւսը՝ առաջարկում էր միանգամայն անհետանք թողնել 16 ան-դամների բողոքը և ձանաչել եղած որոշումները և բոլոր ընտրութիւնները կանոնաւոր: Երկար, և պէտք է խոստովանած անտեղի վիճաբանու-թեանի անհասկանալի թող և անտախտ նախա-դասութեան, տեկցին մինչև գիշերվայ 12 ժամը: Վերջապէս հարցը բուհարկութեան դրվեց: Բայց բուհարկութեան, ժողովը ձայնեց ձայնեցի ահալին մեծամասնութեամբ (36-ով ընդդէմ 18-ի) որո-շեց՝ անկանոն համարել Սիմօն Հախումեանի ընտրութիւնը, և ուրեմն ուղեւորել: Ապա բուհարկից խորհրդի զեկուցման միւս կէտը, և ժողովը՝ 24 1/2 ձայնով 24 ձայնի դէմ՝ որոշեց չը բեկանել մարտի ժողովի միւս կէտերը: Դրա-նով էլ վերջացաւ այդ անախորժ ժողովը, որի պարագմունքի նիւթը Բարեգործական ըն-կերութեան ամբողջ զոյւթիւնն են ընթացում ա-ռաջին ղեպն է, և յայտնուեց վերջինը կը լինի: Ընկերութեան 14 անդամ զոյւթեան ընթաց-քում չէ եղել ոչ մի դէպք, որ մի մարդ, ա-ռանց անդամ լինելու զայ ժողովին, մասնակցի, ընտրվի, չը նայած նոյն իսկ եղած նախադրու-յումներին: Սա խորհրդակալութեան չը տեսնված փաստ է:

Յիշեցնում ենք, որ վաղը, չորեքշաբթի, ապրիլի 30-ին, սիրող և երի մի խումբ բանկի թառ-բում տալու է մի ներկայացում՝ Բարեգործական նպատակով: Պէտք է կարծել, որ մի կողմից դէպի սիրողներ խաղը ունեցած հետաքրքրութիւնը, և միւս կողմից բարեգործական նպատակը թառբոն կը գրաւեն հաւաքակութիւնը:

ԵՐԵՎԱՆԻՑ Իմը գրում են. «Բարեգործական ընկերութեանը այստեղի հիւղը 500 բ. ստացաւ խորհրդից, գաղթականներին նպատե-լու համար: Այդ փողը Գանիայի թագաւորու-ղարկված գումարից է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական «Daily News» լրագրի վերջին համարում կարդում ենք հետեւեալը. «Մա-մուլի ընկերակցութեան հարցում են, թէ սուլթանը զիմն է Անգլո-հայկական ընկերու-թեան խորհրդին առաջարկելով ուղարկել Կ. Պօլիս, որը կը խորհրդակցի թիւրքաց ներ-քին գործերի միջոցաւ հետ՝ Անատոլիայում մացնելի բէֆօրմների մասին: Պատգամաւորու-թեան անդամները պէտք է համարվեն սուլթա-նի հիւրերը, քանի որ նրանք Կ. Պօլսում կը լի-նեն: Կարծում են, որ համաձայնութեան հի-մունք կայ արդէն կայացրած սուլթանի և հայե-րի մէջ»:

Կալիֆօրնիայի պանդուխտ-հայերի մէջ նորերս հանգանակվեց յօգուտ Հայաստանի թշուա-հայերի՝ 353 զօլլար (մօտ 700 բաւլի), որը ուղարկվեց Կ. Պօլսի հայոց պատրիարքարան, նպատակին հասցնելու համար:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

«Հալաւի գործակալութեան» թղթակիցը Ա-թլէքից հաղորդում է յունաց նոր միջնադար-նախադաս Բալլիի հետ ունեցած խօսակցութիւնը: Շնոր կարենէտը—տապ Բալլի—դեռ ժամանակ չէ ունեցել զործողութեան որոշ ծրագիր հա-տատել: Մենք որոշել ենք ուղարկել Ֆարսալ նոր միջնադարի երկուսին թէ խախտուելու համար զօրքը, որ այնքան արիւնքար կուտ է և թէ երկրի վիճակի հետ ծանօթանալու:

—Կարծում էր որ Թէսալիայի զօրքը կարող է շարունակել պատերազմը:

—Եւ լիակատար փաստութիւն ունեմ դէպի

այդ զօրքը: Դուք տեսնում էք, թէ ինչպէս մեր մի քանի զօրախմբերը, մասաւանդ Սօլէնեցի զօրագունքը յառաւ զիմադրութիւն են ցոյց տա-լիս: Մեր գլխաւոր պալատութիւնը այս պատե-րազմի մէջ այն է եղել, որ մենք առաջուց ո-րոշ ծրագիր չենք ունեցել: Եպիսոսում մենք աջողութիւն ունենք և եթէ մեզ աջողի վերց-նել և Պրեվէզան, մեր դրոթիւնը աւելի նպաս-տաւոր կը լինի:

—Արդեօք ոչինչ չը գիտէք մեծ պետութիւն-ների միջամտութեան մասին:

—Մինչև այժմ եւ ոչինչ չը գիտեմ:

Լօնդօնից այդ առիթով Բէյքէրի գործակա-լութիւնը հետագրում է, որ անգլիական պարլա-մենտում կըրգոն յայտնեց, թէ մեծ պետութիւն-ների մէջ ներկայումս կարծիքների փոխանա-կութիւն է լինում թիւրք-յունական հարցի մասին, բայց բանակցութիւնների բնաւորու-թեան մասին ոչինչ չէ կարող հարցադրել: Մեծ պետութիւնները լուրջ կերպով ցանկանում են վերջ դնել պատերազմին, բայց միջնորդութեան աջողութեան համար պահանջվում է ամենից ա-ռաջ, որ կուռղ կողմերը ապացուցանեն, թէ պատրաստ են ընդունել այդ միջնորդութիւնը: Անգլիական լրագրիները յայտնում են սակայն, որ յունաց թագաւորը և կուսակալութիւնը յայտնել են, թէ պէտք է կուռն մինչև վերջին րօպէն, մինչև գտնէ պատուաւոր հաշտութիւն կնքելը: «Si vis pacem para bellum» առել է Բալլի. «Մենք պէտք է պարտաւորենք մեր ազ-գային պիւրի մնացորդը և աշխատենք պատուա-ւոր պայմաններ ձեռք բերել»:

Հռօմից հեռագրում են «Daily Chronicle» լրագրին, որ խալկիայի քաղաքական չրջանե-րում հաստատում են, թէ իբր Գունաստանը արդէն դիմել է այն մեծ պետութիւններին, ո-րոնք հովանաւոր էին նրա 1826 թվի ազատու-թեան, այն է Ֆրանսիային, Անգլիային և Ռու-սաստանին, խնդրելով նրանց միջամտութիւնը:

Բեյքէրից հեռագրում են «Daily Telegraph» լրագրին, թէ սուլթանը պարտաւոր է դադարեցնել պատերազմը հետեւել պայմաննե-րով. 1) յետ կանչել կրետէից յունաց զօրքը, 2) վերականգնել 1831 թվի սահմանները Յու-նաստանի և Թիւրքիայի մէջ, 3) վճարել պատե-րազմական առգանքը: Իսկ «Temps» լրագրը հաղորդում է, որ կոմս Մուրալիէլ և կոմս Գուլիսովսկին որոշել են առաջարկել Եւրօպա-յին իրանց միջնորդութիւնը Թիւրքիայի և Յու-նաստանի մէջ, հիմն ընդունելով կրետէի ինք-նավարութեան սկզբունքը: Սակայն Գունաստա-նում գտնվող կամաւորները այլ կերպ են մտա-ծում: Ահա ինչ են հեռագրում Հռօմից. «Աթէն-քում գտնվող զենեակալ Ռիչիօտտի Գարիբալդի յայտնում է, որ նա տառն հաղար մարդու գլուխ անցած և առանց թնդանթի, մտադիր է մի քանի օրում յետ գրաւել Լարիսան և ամբողջ Թեսալիան: Գարիբալդին յայտնում է, որ նրա խառակաւն բանակը բաղկացած կը լինի 8000 հոգուց»:

Այժմ այլ եւ գաղտնիք չէ, որ յոյն-թիւրքա-կան պատերազմի մէջ զլխաւոր դերը խաղացել Գերմանիայի կայսրը—Կրետէի հարցի սկզբում խալկիան և Անգլիան համաձայն էին, որ կրե-տացիները իրանք վճեն մի ընդհանուր ձայ-նատուութեանը, թէ ինչպէս կառավարութիւն են ցանկանում իրանք: Այդ համաձայնութեան կը միանային և միւս պետութիւնները, բայց վիլհելմ II հակառակվեց: Նա բացարձակ հա-մակրութիւն է ցոյց տալիս Աթլիէ Հալիլին և ատում է Գունաստանը այն ժամանակից, երբ իր քոյրը, յունաց թագաժառանգի կինը, հակա-ռակ իր ցանկութեան, հեռացաւ լիւթերական եկեղեցուց և ընդունեց օրթօքսոսութիւն: Այդ կողմից վիլհելմ նոյն իսկ Աթլիէ-Հալիլից էլ անտղք է լինել, Աթլիէ-Հալիլի, միտք ունէր Գունաստանի հետ համաձայնութիւն կայացնել Կրետէի վերաբերմամբ: Վիլհելմ II-ի կողմը, սակայն, զերակշիռ հանդիսացաւ և Եւրօպան հե-տեւց նրան: Վիլհելմ ցանկանում էր, որ պա-տերազմ լինի, սրովհետեւ նա գիտէր, որ թիւր-քերը պիտի յաղթեն, քանի որ թիւրքաց զօրքե-րի մէջ այնքան զերմանական օֆիցերներ կան —Խնքը, Խնքեմ-փաշա, գերմանացի է և նրա յաղթութիւնները գերմանական զօրքի համար լաւ բեկանակներ են:

